Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի փոխթեմակալին յայտնել Նորին Վեհափառութեան գոհունակութիւնն ու Հայրապետական օրհնութիւնը Բասարգեչարի շրջանի ատրիկան ս. Աւետիս Տէր-Գրիգորեանին և եկեղեցու շինութեան հոգաբարձու ս. Ղարիբ Բոյաջեանին, որ առաջինն աջակցութիւն է ցոյց տուել եկեղեցու շինութեան գործում, իսկ երկրորդը նուիրել է նորակառոյց եկեղեցու գմբէթի համար խաչ, մի ջահ, սեղանի վարագոյր և արծաթեայ սկիհ։ 29 յունուարի. թ. թ. 209 և 210։

Կոնդակ օրհնութեան Պետերբուրգի Հայոց եկեղեցական-ժխական դպրոցի Յօբելենական Ցանձնաժողովի անունով դպրոցի 25 ամեայ յոբելեանը կատարելու առթիւ։ 5 փետրուարի. թ. 257։

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Թէոդորոս Խաչիեանցի անունով Շուշու Մեղրեցոց ս. Աստուածածին եկեղեցու դպրոցը վերանորոգելու առթիւ, որի համար ծախսել է 3000 ռուբլի։ 8 փետրուարի. թ. 268։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 735. 12–13 դեկտեմբերի 1912 թ. Սինոդն ի նկատի ունենալով, որ Ներսէս քահանայ Հերթեցեանը իւր 12 ամեայ քահանայագործութեան ընթացքում միշտ խռովութիւնների և դժտութիւնների պատճառ է եղել և չէ ճանաչել հոգևոր իշխանութիւն, չի կատարել նրա ամենաօրինական պահանջները, այլ ընդհակառակը ըմբոստանալով իւր իշխանութեան դէմ անտեղի և անարդար բողոքներ է յարուցանում, իւր գրութիւններում թեմական իշխանութեան համար վիրաւորական ոճ է բանեցնում, քանից զգուշացումներ է եղած և պատժուած է, բայց չի ուզում իւր խռովարար ընթացքից, որոշում է ազատ համարել նորան քահանայական կարգից և իսպառ հոգևոր կոչումից։

Թ. 7. 14 յունուարի 1913 թ. Սինոդը՝ լսելով Երևանի Կանխատարության 1912 թ. Դեկտեմբ. 10-ի № 8667 յայտարարությունը, որոշեց. Նաշ-Փեադիկլար գիւղի ընակիչ Ս. Արխատակէս Յարությունեանցին ընդունել Հոգևոր կոչման մէջ և պատուիրել Երևանի Հայոց Կանխատարությանը մոցնել հոգևորականների ցուցակի մէջ և առաջարկել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել ընծայացու Արխատակէս Յարությունեանին քահանայ Նաշ-Փեադիկլար գիւղի համար.

Թ. 20. 18 յուն. 1913 թ. Սինոդը՝ լսելով Վրաստանի Հայոց Կանխատարության կրկնակի յայտարարությունը՝ որոշեց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրության թոյլ տալ Վրաստանի Հայոց վիճակային Կանխատարությանը հոգևոր կոչման մէջ ընդունել Արշակ Եփխանեանին և յանձնարարել թեմի ժամանակաւոր կառավարչին ձեռնադրել նրան քահանայ Բարեսի գիւղի համար.

Թ. 21. 18 յուն. 1913 թ. Սինոդը՝ լսելով Շամախու Հայոց Կանխատարության յունիս 30-ի թ. 1140 յայտարարությունը՝ որոշեց. թոյլ տալ Շամախու Հայոց վիճակային Կանխատարությանը հոգևոր կոչման մէջ ընդունել Յակոբ Մոսխանեացին և յանձնարարել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Բաղուի ս. Աստուածածին եկեղեցու այն ծխականների համար, որոնք բնակվում են Բիբի-Հէյբաթ թաղում.

Թ. 22. յուն. 18. Սինոդը որոշեց անցեալ տարիների նման ուղարկել Կ. Պոլսի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի անունով մի հարիւր ռուբլի (100 ռ.) իբրև նպաստ Մայր Աթոռի կողմից Ազգային ս. Փրկիչ հիւանդանոցին.

Թ. 36 յուն. 23. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած տարուայ դեկտեմբերի 28-ի թ. 1846 կոնդակը, որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց Կանխատարությանը տալ հանգուցեալ գրականագէտ Ղազարոս Ազարյանի այրի Նատալիա Ազարյանին նպաստ տարեկան երկու հարիւր ռուբլի վիճակային արդիւքից մինչև նորա մահը՝ սկսած այս յունուարի 1-ից.

թ. 42. 23 յուն. Սինոդը՝ լսելով Սինոդի հաշտարարական մասի 1612 թ. զեկուցումը, որ վերաբերում է տպարանի անունով ստացած արտատպների գանձման՝ որոշեց. ի նկատի ունենալով, որ արտատպները չեն ստացում ս. առաքելական աթոռի անվերաբերելիության պատճառով և որ հարկաւոր է նրանց ուշադրութիւնը գարձնել այս հանգամանքի վերայ՝ խնդրել Նորին Վեհափառութեան անօրէնութիւնը։

թ. 47. յուն. 25. Սինոդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի նախկին անդամ՝ գանձապահ Մուշեղ քահանայ Վարդապետեանի գործը, որոշեց. նկատի առնելով, որ Մուշեղ քահանայ Վարդապետեանը արդէն լրիւ վճարել է իւր վերայ հաշուող 2823 ռ. 75 կոպէկի գումարը, գործը կարճել և պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային փոխադրել Սինոդ այդ գումարը, որ Կոնսիստորիայի նախահաշուով չէ նախատեսուած իրրև մուտք։

թ. 52. 28 յունուարի. Սինոդը՝ լսելով Վրաստանի Կայոց Կոնսիստորիայի անցեալ տարուայ մայիսի 5-ի թ. 1756 յայտարարութիւնը Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցուն պատկանող «Արափլու» հողաբաժնից 200 դեսեատին հող Ժամհարեան նոր բացուելիք Գիւղատնտեսական դպրոցին ժամերու մասին, որոշեց. համաձայնուելով ժխանների վճռին ս. Յովհաննէս եկեղեցու «Արափլու» հողը ժամհարեանին վաճառելու համար՝ գեսեատինը 100 ռուբլիով, թոյլատուութիւն խնդրել Բարձրագոյն իշխանութիւնից յիշեալ եկեղեցապատկան հողը վաճառելու և այս անօրէնութեան մասին այժմ և ետքի տեղեկացնել Կոնսիստորիային։

թ. 55. 30/31 յունուարի. Սինոդը՝ լսելով Հոգևոր գործերի դեպարտամենտի անցած տարուայ գեկտ. 13-ի թ. 11601 գրութիւնը, որով Սաւրոպոլի հայոց գերեզմանատանը հայ մատուռ կառուցանելու մասին խնդրում է Սինոդի եզրակացութիւնը, որոշեց. թոյլ տալ Սաւրոպոլի հայոց գերեզմանատանը մատուռ կառուցանել և յայտնել այս մասին Հոգևոր գործերի դեպարտամենտին

և հրամանագրել Ատրպատականի վիճակային Կոնսիստորիային ի պատշաճաւոր կարգադրութիւն, վերադարձնելով գործը։ Յայտնել նոյնպէս Կոնսիստորիային, որ, ինչպէս երևում է այս գործից, Կոնսիստորիան չի վարուել օրէնքի որոշադրութեան համաձայն և խախտել է եկեղեցիների վերաշինութեան համար օրէնքի սահմանուած միջնորդութիւն յարուցանելու կարգը։

Թ. 57. 30/31 յունուարի. Մինոգը՝ լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը Տփխիսի Թանդոյեան եկեղեցու միաբաններ՝ Ներսէս աւագ քահանայ Ղամազեանի և Յարութիւն քահանայ Ճուղաբեանցի անպատեհ արարքների մասին, որոշեց. բեկանել Կոնսիստորիայի վճիռը, որ վերաբերում է Ղամազեան քահանային թէլէֆ ուղարկելուն մի ամսեայ քահանայագործութիւնից դադարեցման և պատուիրել խիստ յանդիմանութիւն կարգալ Թանդոյեան եկեղեցու միաբաններ՝ Ներսէս աւագ քահանայ Ղամազեանին և Յարութիւն քահանայ Ճուղաբեանին իրենց անպատշաճ վարմունքների համար եկեղեցու մէջ, զգուշացնելով նրանց, որ այդպիսի արարքների համար ապագայում խիստ պատժի կենթարկուեն։

Թ. 58. 30/31 յունուարի. Մինոգը՝ լսելով Ռշնեցի Եահնուրաց, Հուսէին և Ազամալ Ալիոպլիների կողմից գրուած վանքապատկան հողերի մասին Երևանի շրջանային դատարանի կայացրած վճիռը, որով հողերը յանձնւում են Մայր Աթոռին, որոշեց. Վանական կառավարութեան միջոցով պատուիրել կալուածոց կառավարչին յետ վերցնել այդ հողերը և տիրապետել որպէս Մայր Աթոռի սեփականութիւն։

Թ. 59. 30/31 յունուարի. Մինոգը՝ լսելով Հանգուցեալ Սարգիս Ջանումեանի յօգուտ ս. Էջմիածնի Գ. Հ. ձեմարանի կտակած գումարի տոկոսների գործադրութեան համար նորին Սրբութեանը տուած յայտարարութեան մասին, որոշեց. կարճել այս գործը և ներկայացնել ձեմարանի վարչութեան տարէցտարի գումարուող գրամները վերհսկելու

կոչմից նշանակուած տանէր պահելու համար և հրատարակել «Արարատում» այդ մասին։

թ. 60. 36/31 յունուարի։ Սինոդը՝ լսելով Ալեքսանդր Արամաքլիսեանի կտակով հոգևոր իշխանութեան իրաւասութեան յանձնուած նոյա կալուածների շահագործման և նրանից ստացած փողի գործադրութեան խնդիրները՝ որոշեց։ գրամները պահել, մինչև որ կը գոյանայ մի գումար, որով հնարաւոր կլինի կտակի տրամադրութիւնը կատարել՝ միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում՝ տանէր պահել կտակողի անուան յիշատակին հայ չքաւոր ընտանիքներից, իսկ տների վերանորոգութեան համար այժմ և եթէ հոգալ։